ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.12.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/117

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատախազություն
Բողոք բերող՝ «Այթի 365» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ դատախազության ներկայացուցիչ՝ Ա. Գաբրիելյանի
«Այթի 365» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցում, համակարգչային սարքավորումների և IP հեռախոսների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Այթի 365» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 19.11.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ դատախազության կարիքների համար համակարգչային սարքավորումների և IP հեռախոսների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԴԳ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնևանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 19.11.2020թ.-ին:

20.11.2020թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/117 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 04.12.2020թ.-ին:

2. «Այթի 365» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Այթի 365» ՍՊԸ-ն 19.11.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ դատախազության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է ուրբաթ օրը 13.11.2020թ., ժամը 18:15:

Ընթացակարգով հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել հրավերի վերաբերյալ հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրը ժամը 10:00-ը, այն է 20.11.2020թ. ժամը 10:00 (ըստ www.gnumner.am հրապարակված է 2020-11-13 18:15:00-ից մինչև 2020-11-20 10:00:00 ժամը ներառյալ):

Ընթացակարգի հրավերը armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ գրանցված մասնակիցներին ուղարկվել է ուրբաթ օրը 13.11.2020թ. աշխատանքային ժամի ավարտից հետո:

Ընթացակարգի հրավերի 3.1 կետի համաձայն՝ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում: Հանձնաժողովը հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրում է համակարգի միջոցով՝ հարցումը սաանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Ընթացակարգի հրավերի 3.2 կետի համաձայն՝ հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը պարզաբանումը տրամադրելու օրը հրապարակվում է համակարգում և www.procurement.am հասցեով գործող տեղեկագրի (այսուհետ՝ տեղեկագիր) «Գնումների հայտարարություններ» բաժնի «հրավերների պարզաբանումների վերաբերյալ հայտարարություններ» ենթաբաբաժնում՝ առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները:

Ընթացակարգի հրավերի 3.3-րդ կետի համաձայն՝ պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է սույն հրավերի բովանդակության շրջանակից կամ եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների տեխնիկական բնութագրերի՝ սույն հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Հրավերը հրապարակելու հաջորդ աշխատանքային օրը, երկուշաբթի 16.11.2020թ., «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն փորձել է պարզաբանում պահանջել Պատվիրատուից Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի մասով, սակայն ժամկետի պատճառով armeps համակարգի համապատասխան էջը այլևս ակտիվ չի եղել:

Ընթացակարգի հրավերով 7-րդ չափաբաժնի մասով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

VoIP հեռախոս, Հատկություններ, 4.3" 480 x 272-pixel color display with backlight, Opus codec support, USB 2.0, T4S Auto-P template unified, T4S firmware unified, Up to 16 SIP accounts, Dual-port Gigabit Ethernet, PoE support, Paperless label design, Headset, EHS support, Wi-Fi via WF40, Bluetooth via BT40, USB recording, Supports expansion modules, Stand with 2 adjustable angles:*

ա) «Գնումների մասին» ՀՀօրենքի (այսուհետ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝

1. Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

2. Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրը, առանց նշելու հարցումը կատարած մասնակցի տվյալները, իսկ փակ Ընթացակարգի դեպքում հարցման ն պարզաբանումների բովանդակության մասին պարզաբանումը տրամադրվում է հրավեր ստացած մասնակիցներին:

3. Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն հոդվածով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից: Ընդ որում, մասնակիցը գրավոր ծանուցվում է պարզաբանում չտրամադրելու հիմքերի մասին՝ հարցումը ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Ընթացակարգի հրավերի 3.1 կետի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ համակարգի միջոցով հանձնաժողովից պահանջելու հրավերի պարզաբանում:

Ընթացակարգի հրավերի 3.3-րդ կետի համաձայն՝ պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ...:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալ կարևոր փաստերը.

ա) Նախ և առաջ, Ընթացակարգի հրավերը www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է ուրբաթ օրը 13.11.2020թ., ժամը 18:15:

Փաստորեն, հնարավոր մասնակիցներին տվյալ Ընթացակարգի հրավերը ուղարկվել է ուրբաթ օրը, աշխատանքային օրվա ավարտից հետո և համապատասխանաբար, մասնակիցները հնարավորություն ունեին ծանոթանալու Ընթացակարգի հրավերին, և

ներկայացնել պարզաբանում ստանալու խնդրանք միայն հաջորդ աշխատանքային օրը, այսինքն երկուշաբթի 16.11.2020թ.:

Մասնավորապես, «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն պատրաստել էր հետևյալ բովանդակությամբ պարզաբանում ստանալու խնդրանք, որը էական նշանակություն ուներ հրավերի տեխնիկական բնութագիրը լիարժեք ընկալելու և ընթացակարգին մասնակցության հարցը որոշելու համար:

Սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայտեր ներկայացնելու համար սահմանվել էր ընդամենը 7 օրացուցային օր (մինչև 20.11.2020թ.), հրավերը հրապարակվել էր ուրբաթ օրը 13.11.2020թ., իսկ հրավերի համաձայն մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում, ապա նման պարագայում բոլոր մասնակիցները, այդ թվում նաև «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն, զրկվել են հնարավորությունից պահանջելու պարզաբանում այն պարզ պատճառով, որ հրավերը հրապարակելուդ հետո հենց հաջորդ աշխատանքային օրից սկսած սահմանված թույլատրելի ժամկետը դարձել էր լրացած:

Գտնում ենք, որ պատվիրատուն նման ժամկետում հրապարակելով Ընթացակարգի հրավերը մասնակիցներին զրկել է Օրենքի 29-րդ հոդվածով և ձրավերի 3.1 կետով երաշխավորված պարզաբանում պահանջելու իրավունքից:

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական փվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, տափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հասկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրում ենք այն հանգամանքի վրա, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմվել է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, մասնավորապես, VoIP հեռախոսը հնարավորության մասով սահմանվել են հետևյալ պարամետրեր՝ T4S Auto-P template unified T4S firmware unified:

Այս պարամետրերի առումով խնդրում ենք նկատի ունենալ հետևյալը՝ տեխնիկական բնութագրի վերոհիշյալ պահանջը ըստ ՍՊԸ-ի խտրական է և սահմանափակում է մրցակցությունը:

Մասնավորապես, նշված երկու պարամետրերը T4S Auto-P template unified և T4S firmware unified, բնորոշ են բացառապես Yealink չինական ընկերության (https://www.yealink.com/) կողմից արտադրվող միայն VoIP հեռախոսի միայն մեկ մոդելին SIP-T46S (համապատասխան տեխ. բնութագիրը կցվում է): Եվ աշխարհում գոյություն չունի նման պարամետրերի համադրությամբ վաճառվող VoIP հեռախոս, ինչի նշանակում է, որ ցանկացած մասնակից փվյալ Ընթացակարգին մասնակցելու դեպքում այս չափաբաժնով պետք է մատակարարի բացառապես այս ընկերության այս մոդելի ապրանքը և այլևս ոչինչ, ինչը խտրական է և ակնհայտորեն սահմանափակում մրցակցությունը:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ ՀՀ դատախազության կարիքների համար «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԴԳ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը Ընթացակարգի հրավերը կազմել է Օրենքի 13-րդ հոդվածի պահանջների խախտմամբ, իսկ հրավերի հրապարակման ժամկետը զրկել մասնակիցներին պարգանաբում պահանջելու հնարավորությունից, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի խախտմանը, ինչպես նաև զրկել մասնակիցներին Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված գնման գործընթացին մասնակցելու իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունից:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Այթի 365» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ դատախազության կարիքների համար համակարգչային սարքավորումների և IP հեռախոսների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԴԳ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնևանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշում:

Ընկերությունը 25.11.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի կողմից 19.11.2020թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/117 բողոքը, որով վիճարկել ենք ՀՀ դատախազության կարիքների համար «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնանշման հարցումը (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ներկայացված բողոքով «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն պահանջել է պարտավորեցնել ՀՀ դատախազության կարիքների համար «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Հարգելի պարոն Օհանյան, հայտնում ենք, որ բողոքում ներկայացված փաստական հանգամանքները առաջացրել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների խախտում և սահմանափակել «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի գնման գործընթացին մասնակցելու

իրավունքի արդյունավետ իրականացումը տվյալ ընթացակարգի միայն 7-րդ չափաբաժնի մասով:

Մասնավորապես, հրավերի հրապարակելու ժամկետը զրկվել է «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ին ընթացակարգի միայն 7-րդ չափաբաժնի մասով պարզաբանում պահանջելու հնարավորությունից, ինչպես նաե այդ չափաբաժնով տեխնիկական բնութագրով սահմանված երկու պարամետրեր T4S Auto-P template unified ե T4S firmware unified, հանդիսանում են խտրական պահանջ ե սահմանափակում մրցակցությունը, քանի որ բնորոշ են բացառապես Yealink չինական ընկերության (https://www.yealink.com/) կողմից արտադրվող միայն VoIP հեռախոսի միայն մեկ մոդելին SIP-T46S: Եվ աշխարհում գոյություն չունի նման պարամետրերի համադրույթամբ վաճառվող VoIP հեռախոս, ինչի նշանակում է, որ ցանկացած մասնակից տվյալ Ընթացակարգին մասնակցելու դեպքում այս չափաբաժնով պետք է մատակարարի բացառապես այս ընկերության այս մոդելի ապրանքը և այլևս ոչինչ, ինչը խտրական է և ակնհայտորեն սահմանափակում մրցակցությունը:

Հաշվի առնելով, որ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի իրավունքները և օրինական շահերը ոտնահարվել են Ընթացակարգի հրավերի միայն 7-րդ չափաբաժնի մասով, ուստի բողոքներ քննող անձին խնդրում ենք չքննարկել 19.11.2020թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/117 բողոքով ՍՊԸ-ի ներկայացրած պահանջը և պարտավորեցնել ՀՀ դատախազության կարիքների համար «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարված ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15 ծածկագրով ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով, չկայացած հայտարարելու վերաբերյալ:»:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Այթի 365» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել ՀՀ դատախազության կարիքների համար համակարգչային սարքավորումների և IP հեռախոսների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԴԳ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնևանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ գնման ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշում:

3. <u>ՀՀ դատախազության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 20.11.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/17282-2020 գրությամբ դիմել է ՀՀ դատախազություն-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից 19.11.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին՝ միաժամանակ 27.11.2020թ.-ին թիվ 10.7/10.7/22796-2020 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով ներկայացնում եմ թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/117 գործի քննության շրջանակում բողոքի վերաբերյալ դիրքորոշում:

Անդրադառնալով գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներին՝ հայտնում եմ, որ ՀՀ դատախազությունը իր կարիքների համար «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարել է թիվ «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցումը (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է 13.11.2020 թվականին, ժամը 18:15-ին: Հայտնեմ, որ օրենսդրական որևէ կարգավորմամբ գնանշման հարցման վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու ժամային սահմանափակում առկա չէ:

Բողոքաբերը՝ վկայակոչելով վերոհիշյալ հանգմանքը, նշել է թե իբր պայմանավորված այն հանգամանքով, որ հայտարարությունը հրապարակվել է ուրբաթ օրը աշխատանքային ժամի ավարտից հետո հնարավոր չի եղել պատվիրատուից խնդրել հրավերի պարզաբանում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

Սույն իրավական նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ մասնակիցը՝ տվյալ դեպքում բողոքաբերը, իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում, այնինչ բողոքաբերը նշել է թե իբր հրավերի պարզաբանում ստանալու խնդրանքով կարող էր դիմել միայն հաջորդ աշխատանքային օրը՝ 16.11.2020 թվականին:

Սույն դիրքորոշումը առնվազն անհասկանալի է, քանզի օրենսդրական կարգավորմամբ կամ armeps էլեկտրոնային համակարգով առկա չէ որևէ սահմանափակում այն մասով, որ հնարավոր չէ հրավերի պարզաբանում ստանալու խնդրանքով դիմել շաբաթ և կիրակի օրերին և/կամ 18:00-ից հետո, ուստի պայմանավորված նշվածով, պետք է փաստել, որ բողոքաբերի այն փաստարկը, թե իբր հրավերի պարզաբանում ստանալու խնդրանքով կարող էր դիմել միայն հաջորդ աշխատանքային օրը՝ 16.11.2020 թվականին, խեղաթյուրված է: Եթե ենթադրաբար ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ «ԱՅԹԻ 365» ՍՊ ընկերությունը իր աշխատանքային գործունեությունը իրականացնում է հնգօրյա աշխատանքային ռեժիմով, ապա նույնիսկ այդ դեպքում բողոքաբերի փաստարկները հիմնավոր չեն, քանզի ՀՀ-ում գործում է նաև առնվազն վեցօրյա աշխատանքային գրաֆիկ և նույնիսկ հնգօրյա աշխատանքային գրաֆիկով աշխատելը դեռևս չի նշանակում, որ մասնակիցը զրկված է իր իրավունքները իրականացնելուց, ավելին՝ այդ պայմանը կիրառելի է եղել բոլոր մասնակիցների պարագայում: Բացի այդ, անկախ այն հանգամանքին, թե ինչ փաստարկով է բողոքաբերը պնդում հրավերի պարզաբանում ստանալու խնդրանք ներկայացնելու անհնարինությունը, միևնույն է չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ ձեռնարկել է իրենից կախված հնարավոր բոլոր գործողությունները ակնկալվող պարզաբանումը ստանալու համար, ուստի պետք է փաստել, որ Ընթացակարգի հայտարարությունը ուրբաթ՝ 13.11.2020 թվականին ժամը 18:15 հրապարակելը, որևէ կերպ չի խոչընդոտել բողոքաբերի իրավունքների իրականացմանը: Եվ որ ամենակարևորն է, ուսումնասիրություն կատարելով spyur.am տեղեկատվական հարթակում, փաստում ենք հետևյալը, որ «ԱՅԹԻ 365» ՍՊ ընկերությունն աշխատում է շուրջօրյա գրաֆիկով՝ երկուշաբթիից-կիրակի: Սույնով պայմանավորված պետք է փաստել, որ «ԱՅԹԻ 365» ՍՊ ընկերությունը ուներ և՛ օրենսդրական, և՛ armeps էլեկտրոնային հարթակով տեխնիկական հնարավորություն ներկայացնելու հրավերի պարզաբանում ստանալու խնդրանք շաբաթ և կիրակի օրերին, ինչպես նաև իր աշխատանքային գրաֆիկն էլ է թույլ տվել այն ներկայացնելու շաբաթ և կիրակի օրերին, այսինքն 2020 թվականի նոյեմբեր ամսի 14-ին և 15-ին, իսկ armeps էլեկտրոնային հարթակով այդ սահմանափակումը կիրառվել է ինքնաշխատ եղանակով հայտերի բացման և գնահատման նիստի սկսելուց 5 օրացույցային օր առաջ:

Արդյունքում պետք է փաստել, որ «ԱՅԹԻ 365» ՍՊ ընկերությունն իր իրավունքներից օգտվում է անբարեխիղճ՝ թույլ տալով չարաշահում, որն արտահայտվում է ոչ միայն նշված հանգամանքով, այլ նաև բողոքի ակնհայտ անհիմն պահանջով,

մասնավորապես Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը հստակ կարգավորում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու օրենսդրական հնարավորությունները, որոնց շարքում առկա չէ տեխնիկական բնութագրի ենթադրյալ սխալ կազմման հանգամանքը, ուստի ակնհայտ անհիմն բողոք ներկայացնելով բողոքաբերի գործողությունները ուղղված չեն ողջամիտ շահի ապահովմանը, այլ կամ ինքնանպատակ են, կամ ուղղված են խաթարելու Ընթացակարգի իրականացումը, որն արտացոլվում է նաև բողոքի պահանջով և հետագայում դրա հստակեցմամբ, միայն այն չափաբաժնի մասով, որին իրականում այն վերաբերվում է:

Եթե ընդունենք նույնիսկ, որ տեխնիկական բնութագրում առկա է սխալ, ապա բողոքաբերը չունի իրավական հնարավորություն Ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջ ներկայացնելու, այլ կարող է ներկայացնել միայն հրավերում փոփոխություն կատարելու պահանջ, այն էլ մինչև հայտերի բացման և գնահատման նիստը, որը այլևս իրավասու չէ ներկայացնելու:

Ուստի, պայմանավորված վերոգրյալով, խնդրում եմ մերժել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/117 գործով ներկայացված բողոքը՝ ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

Միևնույն ժամանակ առաջնորդվելով վերոգրյալով, պայմանավորված ակնհայտ անհիմն բողոքով և ղեկավարվելով Գնումների մասին ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, խնդրում եմ կայացնել Ընթացակարգի կասեցումը հանելու որոշում: Սույն միջորդության ներկայացման համար հիմք է հանդիսանում այն հանգամանքը, որ ՀՀ դատախազությունը իր կարիքների համար «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարել է թիվ «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցումը, որի շրջանակում ձեռք բերվող ապրանքների համար ֆինանսական հատկացումներ են կատարվել 2020 թվականին «դատախազության տեխնիկական հագեցվածության բարելավում» ծրագրի շրջանակում, որի մասով հատկացումներ առկա չեն 2021 թվականին (տես՝ https://www.minfin.am/hy/page/petakan_byuje_2021t_nakhagits_/ հղումով), այսինքն պայմանավորված նշվածով՝ ՀՀ դատախազությունը Ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ապրանքները կարող է ձեռք բերել միայն այս տարի՝ 2020 թվականին, իսկ սույն դեպքում Ընթացակարգի կասեցում և բողոքի քննության ավարտից և որոշում կայացնելուց հետո դրա վերսկսումը կհանգեցնի այնպիսի հետևանքների, որ հնարավոր չի լինի ավարտել Ընթացակարգի շրջանակում այդ ապրանքների ձեռքբերումը:

Բացի այդ կրկին նշեմ, որ բողոքաբերը չհետապնդելով ողջամիտ իրավական շահ և բողոքարկելով տեխնիկական բնութագրի սխալ կազմման հանգամանքը, չի պահանջել փոփոխություն կատարել տեխնիկական բնութագրում, այլ խնդրել է չկայացած հայտարարել Ընթացակարգը՝ առանց նշելու դրա իրավական հիմքը: Ուստի, սույնով պայմանավորված, պետք է կրկին փաստել, որ բողոքաբերի գործողությունները խաթարում են ՀՀ դատախազության բնականոն գործունեությունը և արդյունքում Ընթացակարգի կասեցում, հետագայում այն չկայացած հայտարարելը որևէ ողջամիտ ակնկալիք չի կարող ստեղծել բողոքաբերի համար, քանզի անհրաժեշտ ապրանքների ձեռքբերումը 2020 թվականին կլինի անհնարին՝ պայմանվորված ժամկետներով, իսկ 2021 թվականին այլևս այդ մասով հատկացումներ առկա չեն:»:

Պատվիրատուն 01.12.2020թ.-ին թիվ 10/3-162-20 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է նաև հետևյալը.

«Ի լրումն թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/117 գործի քննության շրջանակում բողոքի վերաբերյալ 27.11.2020թ. թիվ 10.7/10.7/22796-2020 գրությամբ ներկայացված դիրքորոշման՝ հայտնում եմ, որ ՀՀ դատախազությունը իր կարիքների համար «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ IP ՀԵՌԱԽՈՍՆԵՐԻ» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագում առկա T4S Auto-P template unified և T4S firmware unified հատկությունները վերաբերում են սարքի ծրագրային ապահովմանը, որը, կախված արտադրողից, կարող է ունենալ այլ անուն կամ նկարագիր և որևէ էական նշանակություն չունի մրցութային հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման փուլում, եթե առաջարկվող սարքը մնացած բնութագրերով համապատասխանում է պահանջներին:

Եթե «ԱՅԹԻ 365» ՍՊ ընկերությունը առաջարկեր այլ բրենդի հեռախոսաապարատ ներկայացնելով տվյալ մոդելին համապատասխան կամ համարժեք մոդել՝ այն հնարավոր կլիներ ուսումնասիրել և համեմատել մեր տեխնիկական բնութագրում ներկայացված պահանջներին, սակայն «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի կողմից հայտ չի ներկայացվել:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/117 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ դատախազության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային սարքավորումների և IP հեռախոսների ձեռքբերման նպատակով 13.11.2020թ.-ին հայտարարվել է «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Հայտերի բացման նիստի օր է սահմանվել 20.11.2020թ.-ին:

iii. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 7-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում՝ 70 հատ IP հեռախոսներ հետևյալ տեխնիկական բնութագրով՝ *«4.3" 480 x 272-pixel color display with backlight, Opus* codec support, USB 2.0, T4S Auto-P template unified, T4S firmware unified, Up to 16 SIP accounts, Dual-port Gigabit Ethernet, PoE support, Paperless label design, Headset, EHS support, Wi-Fi via WF40, Bluetooth via BT40, USB recording, Supports expansion modules, Stand with 2 adjustable angles:»:*

iv. Գործում առկա՝ ՀՀ դատախազության կողմից տրամադրված նյութերի ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 7-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել միայն 1 (մեկ) մասնակից՝ «Յունիքոմփ» ՓԲԸ-ն:

v. «Յունիքոմփ» ՓԲԸ-ն ներկայացրած հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանում, ապրանքային նշան և արտադրողի անվանում նշել է Yealink, իսկ որպես ապրանքի մակնիշ նշել է Yealink EXP 40:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից 19.11.2020թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան

հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը,

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը,

3. օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի

կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված է «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների

համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ դատախազության կողմից համակարգչային սարքավորումների և IP հեռախոսների ձեռքբերման նպատակով 13.11.2020թ.-ին հայտարարված «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 7-րդ չափաբաժնի մասով գնման առարկա է հանդիսանում՝ 70 հատ IP հեռախոսներ, որի տեխնիկական բնութագրով սահմանվել է նաև որ վերոնշյալ ապրանքը պետք է ունենա T4S Auto-P template unified և T4S firmware unified տեխնիկական չափանիշներ: Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած միակ մասնակից «Յունիքոմփ» ՓԲԸ-ն ներկայացրած հայտի թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով որպես առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանում, ապրանքային նշան և արտադրողի անվանում նշել է Yealink, իսկ որպես ապրանքի մակնիշ նշել է Yealink EXP 40:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ ՀՀ դատախազության կողմից համակարգչային սարքավորումների և IP հեռախոսների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով սահմանված գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ չեն նկարագրում ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Պատվիրատուն, նման բնութագրեր սահմանելով, հնարավոր մասնակիցների համար չի ապահովել մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Բացի այդ, Պատվիրատուի կողմից ներկայացված դիրքորոշման հաշվառմամբ, պետք է փաստել, որ սահմանված բնութագրերն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք չեն այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է գնման ընթացակարգը:

Ըստ այդմ, տեխնիկական բնութագրում T4S Auto-P template unified և T4S firmware unified տեխնիկական չափանիշները նշված լինելու հանգամանքը հանգեցնում է սույն ընթացակարգի Օրենքի 3-րդ հոդվածի դրույթների խախտմամբ կազմակերպված լինելուն,

քանի որ Բողոքի քննության ընթացքում արձանագրվեց, որ վերոնշյալ տեխնիկական չափանիշներին համապատասխանում է միայն Yealink ընկերության կողմից արտադրված IP հեռախոսներին:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում և որ Հրավերի թիվ 1 հավելվածով՝ 7-րդ չափաբաժնի մասով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը և այլն: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Պատվիրատուն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից բողոքով Ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով բերված փաստերն ու հանգամանքներն հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են և սահմանափակում են հնարավոր մասնակիցների հավասար իրավունքները: Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտում, ինչը հանգեցնում է գնման ընթացակարգը մասնակի՝ 7-րդ չափաբաժնի մասով, չկայացած հայտարարելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից 19.11.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2020/117 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՀՀ դատախազության կարիքների համար համակարգչային սարքավորումների և IP հեռախոսների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԴԳ-ԳՀԱՊՁԲ-20/15» ծածկագրով գնևանշման հարցման ընթացակարգի գնահատող

հանձնաժողովին ընդունել՝ գնման ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**